ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00 37410) 511-785, Ֆաքս: (00374 10) 511-757

№ ԴԴ-2 Ը-6297

«14» հոկտեմբերի 2014թ.

Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ
Արթուր Սաքունցին և Արայիկ Զալյանին
/ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 59/

Ի պատասխան ՀՀ արդարադատության խորհրդին հասցեագրված Ձեր 20.09.2014թ. դիմումի՝ ուղարկվում է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի 13.10.2014թ. որոշումը:

Առդիր՝ 3 էջ:

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՌՈՒՍՏԱՄ ՄԱԽՄՈՒԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

13 հոկտեմբերի 2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (այսուհետ՝ Հանձնաժողով)

Նախագահությամբ՝ *Գ. Ավետիսյանի,*

Անդամներ՝ *Ա. Աբովյանի, Մ. Պապոյանի, Ն. Բաբսեղյանի, Մ. Թորոսյանի*

Քննության առնելով քաղաքացի Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ Արթուր Սաքունցի և Արայիկ Զալյանի դիմումը,

ՊԱՐԶԵՑ

Ներկայացված դիմումում մասնավորապես նշված է, որ թիվ ԵԿԴ/0136/11/14 դատական գործով որոշում կայացրած Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մ. Մարտիրոսյանը քրեական վարույթն իրականացնող մարմնից անհրաժեշտ նյութեր չի պահանջել, քրեական վարույթն իրականացնող մարմինն այդ նյութերը չի ներկայացրել, որի արդյունքում խախտվել է գործի արդարացի քննության սկզբունքը:

Հանձնաժողովի պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքեր են՝ արդարադատություն իրականացնելիս դատավորի կողմից նյութական և (կամ) դատավարական նորմի **ակնհայտ** և **կոպիտ** խախտումները, որոնք կատարվել են չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը

պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Վերոշարադրյալից հետևում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է ոչ միայն օրենքի նորմի **խախտման** առկայությունը, այլ նաև այն, որ այդ խախտումը լինի **կոպիտ**, այսինքն՝ դրանց միաժամանակյա առկայությունը:

ՀՀ դատական օրենսգրքի 153.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի իմաստով ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որը հեղինակազրկում է արդարադատությունը կամ անհամատեղելի է դատավորի բարձր կոչման հետ: Կոպիտ է նաև պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակազրկում է արդարադատությունը կամ դատավորի բարձր կոչումը:

Նյութական կամ դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտման հասկացության վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև Արդարադատության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ): Այսպես, 2007 թվականի հոկտեմբերի 12-ի ԱԽ-7-Ռ-18 որոշմամբ Խորհուրդն արձանագրել է. «Օրենքի նորմերի կոպիտ և ակնհայտ խախտումներ են արդարադատության իրականացման ընթացքում ՀՀ Սահմանադրության, օրենքների նորմերի այնպիսի էական խախտումները, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, դրանցից զրկելուն, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը խոչընդոտելուն և ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ և օրինական որոշման կայացմանը»:

Խորհրդի մեկ այլ՝ 2014 թվականի ապրիլի 4-ի ԱԽ-7-Ռ-3 որոշմամբ Խորհուրդն արձանագրել է, որ «Խորհուրդը մեկ անգամ ևս վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն արձանագրում է, որ դատավորին վերագրվող խախտումը չի կարող համարվել ակնհայտ և կոպիտ, եթե այն չի պարունակում ՀՀ Սահմանադրության կամ օրենքների նորմերի այնպիսի էական, անվիճելի և անհերքելի խախտումներ, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, չհիմնավորված և չպատճառաբանված որոշման կայացմանը: Հետևաբար, այն չի կարող նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ»:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ներկայացված դիմումը և ամփոփելով պարզված հանգամանքները, գտնում է, որ արդարադատություն իրականացնելիս Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մ. Մարտիրոսյանի կողմից թույլ չեն տրվել դատավարական նորմերի էական, անվիճելի և անհերքելի խախտումներ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մ. Մարտիրոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ չհարուցել:

ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նիստը նախագահող՝ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. ԱԲՈՎՅԱՆ

Մ. ՊԱՊՈՅԱՆ

Ն. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

Իսկական հետ է՝
Ռ. Մարտիրոսյան
14.10.2014թ.